ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետին, 77-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին» N104-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 5-րդ կետի 4-րդ սյունակում «37.25» թիվը փոխարինել «37.5» թվով, «զուգահեռ» բառը փոխարինել «հաջորդական» բառով,

2) 8-րդ կետի 4-րդ սյունակում «8 (10.0 մ x 10.0 մ)» բառերը փոխարինել «4 (5.0 մ x 10.0 մ)» բառերով,

3) 14-րդ կետի 4-րդ սյունակում «4 (5.0 մ x 10.0 մ)» բառերը փոխարինել «8 (10.0 մ x 10.0 մ)» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N104-Ա որոշմամբ «Գինեքար» ՍՊԸ-ին իրավունք է տրվել Վ.Սարգսյան 26/1 շենքի հարակից ճանապարհահատվածում կազմակերպել 4 ավտոտեղի հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ, իսկ նույն հատվածում «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին՝ 8 ավտոտեղի հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ:

Երկու դեպքում էլ նշված ընկերություններին իրավունք է վերապահվել սահմանափակել այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, բացառությամբ տվյալ շենքի այլ սեփականատերերի և օրինական օգտագործողների:

Երևանի քաղաքապետարան է դիմել «Գինեքար» ՍՊԸ-ն և խնդրել փոփոխություն կատարել Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N104-Ա որոշման մեջ, այն է՝ Վ. Սարգսյան 26/1 շենքի հարակից ճանապարհահատվածում թույլատրել կազմակերպել ոչ թե 4, այլ 8 ավտոտեղի հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ:

Խնդրանքը պատճառաբանվել է այն հանգամանքով, որ ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու խնդրանքով դիմելու ժամանակ ընկերության կողմից ներկայացվել են պահանջվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև այն հանգամանքով, որ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին տրվել է համաձայնություն՝ վերջինիս կողմից նշված հասցեում 4 ավտոտեղի հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու համար:

Վարչական գործի փաստական հանգամանքների քննության արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքի ավագանու նշված որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ 8 ավտոտեղի փոխարեն «Գինեքար» ՍՊԸ-ին իրավունք է տրվել կազմակերպել 4 ավտոտեղ հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ և հակառակը՝ 4 ավտոտեղի փոխարեն «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին իրավունք է տրվել կազմակերպել 8 ավտոտեղ հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ:

Վերոգրյալը հիմնավորվում է հետևյալ փաստական հանգամանքներով.

Երևան քաղաքի ավագանու 25.12.2013թ. N 104-Ա որոշման ընդունման պահին հայտնի է եղել այն փաստը, որ Վ.Սարգսյան 26/1 շենքի սեփականատեր «Գինեքար» ՍՊԸ-ն 10.12.2013թ. հ.1/76 գրությամբ նույն շենքի մյուս սեփականատիրոջը՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին տվել է համաձայնություն Վ.Սարգսյան 26/1 շենքի հարակից ճանապարհահատվածում կազմակերպել 4 ավտոտեղի հնարավորությամբ ծառայողական ավտոկայանատեղ: «Գինեքար» ՍՊԸ-ն վճարել է 8 ավտոտեղի համար 800.000 դրամ տեղական տուրք և ներկայացրել նաև Երևան քաղաքի ավագանու 10.12.2013թ. հ.93-Ն որոշմամբ պահանջվող նույն հասցեի շենքի մյուս սեփականատիրոջ՝ «Սենյոր» ՍՊԸ-ի համաձայնությունը և այլ փաստաթղթերը:

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն վճարել է 720.000 դրամ տեղական տուրք՝ 400.000 դրամի չափով /4 ավտոտեղ/ այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը սահմանափակելու համար/ և 320.000 դրամի չափով /4 ավտոտեղի հաշվարկով/ այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը չսահմանափակելու համար/:

Վ.Սարգսյան 26/1 շենքի սեփականատերերից «Գինեքար» ՍՊԸ-ն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 5981,9 քմ մակերեսով տարածք, իսկ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն՝ 2419,9քմ մակերեսով տարածք:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքներն՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N104-Ա որոշման 8-րդ և 14-րդ կետերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Միաժամանակ, առաջարկվում է փոփոխություն կատարել նաև Երևան քաղաքի ավագանու նշված որոշման 5-րդ կետում, քանի որ ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ Աբովյան 14 հասցեին հարակից տարածքում ծառայողական ավտոկայանատեղը կարող է կազմակերպվել միմյանց նկատմամբ մեքենաների ոչ թե զուգահեռ տեղաբաշխմամբ, այլ հաջորդական, իսկ տվյալ ճանապարհահատվածի երկարությունը կազմում է ոչ թե 37.25 մ, այլ 37.5 մ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N104-Ա որոշման փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N104-Ա որոշման փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ